ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Փոքր Հրազդանի 1

№ 4228-Ա «16» հոկտեմբերի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-Ի N 7149-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 9-րդ և 10-րդ հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, 34-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի սեպտեմբերի 26-ի N 2308-Ա հրամանը.

1. Հաստատել՝

1) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի տեղակալի (ծածկագիր՝ 1.3-88) (հավելված 1).

2) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի տեղակալի (ծածկագիր՝ 1.3-89) (հավելված 2) պաշտոնի անձնագրերը:

2. Երևանի քաղաքապետի 2009 թվականի հուլիսի 29-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» հ. 7149-Ա որոշման 1-ին կետի 1.10-րդ ենթակետով հաստատված.

1) N 63 հավելվածի 5-րդ կետի առաջին պարբերության «նրան փոխարինում է» բառերից հետո լրացնել՝ «վարչության պետի տեղակալներից մեկը կամ» բառերը, իսկ երրորդ պարբերության «Վարչության պետը» բառերից հետո՝ «վարչության պետի տեղակալներից մեկի» բառերը.

2) N 64 և 65 հավելվածների 5-րդ կետերի առաջին պարբերության «վարչության պետը կամ» բառերից հետո լրացնել «վարչության պետի տեղակալներից մեկը կամ» բառերը, իսկ երրորդ պարբերության «վարչության պետի կամ» բառերից հետո՝ «վարչության պետի տեղակալներից մեկի կամ» բառերը:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մարդկային ռեսուրսների կառավարման վարչության վրա:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ